




ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՍ ԱՆՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԿԱՅՈՒՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի պատմության և մշակույթի վերջին հազարյոթհարյուրամյա շրջանը կապվում է քրիստոնեության հետ: Այդ իրողությունն իր արտացոլումն է գտել նաև լեզվի, մասնավորապես նրա բառապաշարի մեջ. հարյուրավոր միավորներ (տերմիններ և արտահայտություններ) է ընդգրկում եկեղեցական-հոգևոր կյանքի տարբեր հասկացություններ նշանակող բառերի իմաստային դաշտը, որն, ի դեպ, լեզվաբանական ուսումնասիրության կարիք ունի:

Մենք արդեն մի հոդվածի նյութ էինք դարձրել մի հարց. ինչպիսի՞ն է **Քրիստոս** անվան բառակազմական արժեքը հայերենում¹: Իսկ այժմ փորձենք ներկայացնել այն կայուն բառակապակցությունները, որոնցում ունենք Աստվածորդու անունը: Դրանցից մոտ մեկ տասնյակ ներկայացվել է հայերենի տարբեր բառարաններում², սակայն իրականում կան շատ ավելին, և այդ բոլորն էլ ցարդ հատուկ քննության նյութ չեն դարձել:

Քրիստոս անունը պարունակող կայուն բառակապակցությունները լինում են ոչ փոխաբերական նշանակությամբ և վերաիմաստավորված, այսինքն՝ դարձվածքներ (իդիոմներ):

Դարձվածային միավորներ հանդիպում են 5-րդ դարի հայերեն առաջին իսկ երկերում: Դրանց մի մասի ծագումը թերևս կարելի է վերագրել հայոց լեզվի նախագրային ժամանակաշրջանին:

Մի քանի դարձվածքներ արտահայտում են «քրիստոնյա» իմաստը:

¹ Տե՛ս Դ. Գյուրջինյան, «Քրիստոս անվան բառակազմական արժեքը հայերենում» («Էջմիածին» ամսագիր, 1992, ԺԲ, էջ 50):

² Բառարանային գրանցում ունեցողները մեր աշխատանքում տարբերակվել են աստղանիշներով. * Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան 1945, ** Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975, *** Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, **** Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1980:

ա) **Հաւատացեալ ի Քրիստոս**.—**Հաւատացեալքն ի Քրիստոս**³ արք և կանայք ... փոխեցեն զհանդերձս իրեանց ըստ աշխարհական կարգաց (Եղ., էջ 52): Եւ կամ որպէս թագաւորն հրամայեաց յափշտակել զամենայն ինչսն որ ի Քրիստոս հաւատացելոցն (Բուգ., էջ 96):

Նկատելի է, որ բաղադրիչների տեղերը կարող են փոխվել՝ առաջ բերելով շարահասակաւ տարբերակներ, չնայած որ դարձվածքների կարևոր առանձնահատկություններից մեկը շարահասության որոշակի կայունությունն է: Սակայն դա բացարձակ չէ, օրինակ՝ **հասանել ի վերայ—ի վերայ հասանել, առ ոտն հարկանել—հարկանել առ ոտն**³:

Դարձվածքը կարող է ընդմիջարկվել այլ բառերով, որ պայմանավորված է լինում հատկապէս գրաբարի շարահյուսական յուրահատկություններով: Օրինակ՝ Իսկ **հաւատացեալքն** նշանութեամբ **ի Քրիստոս**⁴ ոչ ինչ երկմտութեամբ թերահաւատէին յառաջին խրատուէ սուրբ վարդապետացն իրեանց (Եղ., էջ 48): Իսկ **հաւատացեալքն** հաւատաւեալք **ի Քրիստոս**⁴ ոչ ի ստոնամանեաց ձմեռայնոյն հովանային, և ոչ ի տապոյ խորշակին ջեռնոին (անդ, էջ 45):

Ավելի ուշ, նաև ժամանակակից լեզվում, այս կառույցը գործածվում է առանց ի նախորդի՝ **Քրիստոսի հաւատացեալ** ձևով: Հմմտ. Իբրև զարիւնարբու վիշապ յարձակեալ գայր ի վերայ **հաւատացելոցն Քրիստոսի** (Ուռն., էջ 40):

Հաւատացեալ ի Քրիստոս դարձվածային միավորն առաջացել է **հաւատալ ի Քրիստոս** բայական կապակցությունից, որ փոխաբերական իմաստով նշանակում է «քրիստոնեություն ընդունել»: Օրինակ՝... որք յաւուրս սրբոյն Գրիգորի և Տրդատայ **հաւատացեալ էին ի Քրիստոս** (Խոր., էջ 300): Եւ եթէ զմոգպետն ևս, որ **հաւատաց ի Քրիստոս**, կամիցիս ընդ նոսա ի համար արկանել, թուով են եւթն (Եղ., էջ 178): ... այլ նովին օրինօք եկաց մինչև **հաւատալ ի Քրիստոս** (Խոր., էջ 151):

Մի այլ կառույց՝ «քրիստոնեություն դավանել» նշանակությամբ, հոմանիշ է սրան. Ապա թէ ոչ **խոստովանեցիս ի Քրիստոս** միածին Որդին աստուծոյ, զոր ... (Բուգ., էջ 128): Կա սրա քանակային (քվանտիտատիվ) տարբերակը, երբ կապակցությունը հանդես է գալիս ծավալուն կազմով⁴, ինչպէս օրինակ՝ ... յոր ամենայն ազգ և ազինք **խոստովանին զտէր Յիսուս Քրիստոս** (Բուգ., էջ 134):

Քանակային տարբերակներ ունեն **Քրիստոս** անունը պարունակող նաև ուրիշ կայուն բառակապակցություններ. մեծ մասամբ ծավալումը կատարվում է **Յիսուս, սուրբ, տէր** բաղադրիչների միջոցով: Հմմտ. Ամենայն ոք զսոցա յիշատակ քաջութեան իբրև **Քրիստոսի նահատակաց** անխափան կատարեացէ (Բուգ., էջ 46): Որպէս և **սուրբ նահատակն Քրիստոսի** Գրիգորիոս պահեալ ի խոշտանգմանսն անվնաս աջով հզօրին... (Փարպ., էջ 17): Դասակից կլինի **Հիսուս Քրիստոսի նահատակների** հետ (Բ, էջ 52):

Հաւատալ ի Քրիստոս և **հաւատացեալ ի Քրիստոս** դարձվածային միավորներիցն սերտորեն առնչվում են **հաւատ ի Քրիստոս** և **հաւատ առ Քրիստոս** ոչ փոխաբերական նշանակությամբ կայուն բառակապակցությունները.— ի ներքոյ ընդ ծիրանեօքն քուրձ զգեցեալ էր առ սէր ջերմեռանդ **հաւատոցն**⁵:

³ Տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն», Երևան, 1973, էջ 169—170:

⁴ Այս երևույթի մասին հանգամանորեն տե՛ս Պ. Բեդիրյան, «Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները», Երևան, 1990, էջ 52—53:

որ առ **Քրիստոս** ունէր (Բուգ., էջ 42): ... և ոչ ի բաց առնէ զողորմութիւնն իր ի մէնջ **հաւատով ի Քրիստոս** (Եղ., էջ 156): Քանակային տարբերակը՝ Հաստատէր զնոսա ի **հաւատսն ի մի տէր Յիսուս Քրիստոս** (Բուգ., էջ 16): Ծարադասական տարբերակը՝ ...վստահացեալ վասն **ի Քրիստոս հաւատոցն** (Խոր., էջ 231):

Այլ բառերով կայուն բառակապակցության բաղադրիչների ընդմիջարկումը չի խաթարում կառույցի ամբողջականությունը, և կազմիչ մասերը գտնվում են այսպես կոչված հեռակա կապի մեջ, «ձգում են» միմյանց:

Դարձվածային միավորի արժեք ունի նաև զեղչված բայական անդամով նախդրավոր կապակցությունը. Եւ միանգամայն թէ զայս խորհեացի իւրաքանչիւր ոք ի ձէնջ որ ի **Քրիստոս Յիսուս** (Բուգ., էջ 124).—«ով հավատում է Քրիստոսին»: Կամ՝ զի եթէ իցէ ոք ի **Քրիստոս**, նոր արարած (Բուգ., էջ 130):

բ) **Քրիստոսի զինուոր** դարձվածքում «քրիստոնյա» նշանակությունն ունի որոշ նրբիմաստ. «նա, ով զենք է դարձրել Քրիստոսի խոսքը», «նա, ով մարտնչում է Քրիստոսի և նրա հավատի համար»⁵: Օրինակներ՝ Ետ պատասխանի **զինուորն Քրիստոսի** և աւէ (Եղ., էջ 13): Խրատ եղին, պնդեցին և արարին զամենեսեան **զինուոր Քրիստոսի** (անդ., էջ 57)⁶:

Կա այս դարձվածքի բառային (լեքսիկական) տարբերակը ևս՝ **զինուոր // զօրական Քրիստոսի**.—Յայնժամ յաղթող **զօրականն Քրիստոսի** կոմսն ճօւլինն ... գայր մտանէր ի Սրուն քաղաք (Ուռհ., էջ 350): Յաղթող **զօրականն Քրիստոսի** Պաղտոյնն՝ անկաւ ի պատերազմի (անդ., էջ 412):

Կարելի է մատնանշել մի այլ կառույց, որ ձևաիմաստային տեսակետից հարազատ է վերևում բերվածին. իբրև քաջ **սպառազէն Քրիստոսի**, իբրև զախոյեան նահատակ ի տղայութենէ տիոց նշկահէր, աներևոյթ թշնամոյն յաղթութեամբ սպառնացեալ (Բուգ., էջ 50):

գ) **Քրիստոսի ծառայ.**—Այստեղ ունենք հետևյալ նրբիմաստները. «ով ենթարկվում է Քրիստոսի ուսմունքին» և «ով ծառայում է Քրիստոսի գործին, հավատին»⁷: Սա, ինչպես և **Քրիստոսի զինուոր** դարձվածքը, իմաստի նեղացման հետևանքով նշանակում են նաև «քրիստոնյա հոգևորական, կրոնավոր»: Օրինակներ՝ Իսկ ըստ շնորհատուր կարգիս՝ ծառայք **Քրիստոսի** եմք և աշակերտ երանելեացն (Եղ., էջ 183): Եւ զոր ոչ երբէք կամէր իւրոց սիրելեացն յայտնել, ականայ առաջի **ծառայիցն Քրիստոսի** մերկանայր (անդ., էջ 47):

Սրա մի տարբերակն է՝ **ծառայ Աստուծոյ**: Ընդհանրապես նկատելի է, որ **Քրիստոս** և **Աստուած** բաղադրիչներով ունենք դարձվածային մի շարք տարբերակներ, մի բան, որ տեսնում ենք նաև բառային մակարդակում, ինչպես՝ **Աստուածածին—Քրիստոսածին** և այլն:

դ) **Քրիստոսի ժառանգակից** «Քրիստոսի գաղափարակից, բախտակից. Աստծո ժառանգորդ».—Մտցեն ամենայն աշխարհի ի ժառանգութիւն Քրիստոսի, լինել ... **ժառանգակից Քրիստոսի** (Ագաթ., էջ 358): Դուք նշմարիտ ծընեալք ի սուրբ Հոգւոյն՝ որդիք էք Աստուծոյ և **ժառանգակիցք Քրիստոսի** (Եղ., էջ 108):

⁵ Հմմտ. Վասն Ծջմարտութեան հաւատոցն մարտնչել, որ վասն Քրիստոսի (Բուգ., էջ 24):

⁶ Հմմտ. Լաւ համարէր **զծառայելն** միայն **Քրիստոսի** (Բուգ., էջ 22):

⁷ Հմմտ. Զգոյշ լեր, արիաբար մարտեաց, քաջապէս վառեաց, **Քրիստոսի զինուորեաց** (Արծր., էջ 318).— «զինվորագրվել Քրիստոսին»:

Քրիստոս անունը պարունակող ուրիշ կայուն բառակապակցություններում արդեն հիշատակված «հոգևորական, կրոնավոր» նշանակությունն առաջնային է (և թերևս միակը):

ա) **Քրիստոսի պաշտօնեայ.**—Որք սինք եկեղեցեաց լինիցին, և մատակարարք բանին կենաց, և հիմունք հաւատոց. **պաշտօնեայք Քրիստոսի** և արբանեակք Հոգւոյն սրբոյ (Բուզ., էջ 22): Եւ ելեալ ընդ առաջ նոցա դասք **պաշտօնէիցն Քրիստոսի** (Փարպ., էջ 55):

բ) **Քրիստոսի սպասաւոր** (հմմտ. **ծառայ Քրիստոսի** և **եկեղեցու սպասավոր**):

գ) **Քրիստոսի դեսպան** և **Քրիստոսի փոխանորդ** շրջասությունները մատնանշում են եկեղեցու նվիրապետությունը, քահանաներին:

դ) **Եղբայր ի Քրիստոս** և **Քրիստոսի եղբայր**** դարձվածային միավորները կարելի է դիտարկել որպես կառուցվածքային տարրերակներ: Օրինակ՝ Զբազմամեղ անձն իմ ... յիշեալ, ո՛վ պատուական վերժանող **եղբայր ի Քրիստոս** (ՀԶՀ, ԺԳ, էջ 905):

Սրանց ծագումը կարելի է կապել Նոր Կտակարանի հետևյալ պատկերի հետ. Եկին առ նա [Քրիստոս] մայրն եւ եղբարք իւր եւ ոչ կարէին հասանել ի նա վասն բազմութեանն: Ազդ եղեւ նմա եւ ասեն. «Մայր քո և եղբարք քո կան արտաքոյ եւ կամին զքեզ տեսանել»:

Եւ ասէ ցնոսա. «Մայր իմ եւ եղբարք իմ սոքա են, որ զբանն Աստուծոյ լսեն եւ առնեն (Ղուկ., Ը 19—21):

Մի այլ կայուն բառակապակցություն՝ **Քրիստոսի եղբայրներ և քույրեր** (ռուս. братья и сестры во Христе), գործածվում է միայն հոգևակի թվով և առանձին աղանդի անուն է:

Երկու դարձվածք նշանակում են «քրիստոնեուհի», «կույս, միանձնուհի»:

ա) **Քրիստոսի աղախին.**—Առաջի սուրբ և փառաւորեալ սեղանոյն Աստուծոյ սնար դու **աղախին Քրիստոսի** [Հռիփսիմեի մասին] ... (Ագաթ., էջ 103): Սա հումանիշ է **Քրիստոսի ծառայ** դարձվածքին՝ իգական-արական տարրերակումով, չնայած վերջինս կարող է նշանակել թե՛ տղամարդ, թե՛ կին: Հմմտ. Ես **ծառայ Քրիստոսի** և **աղախին** անպիտան Համայն՝ դուստր Մամիկոնին ... արարի ինձ յիշատակ արձան (ՀԶՀ, ԺԳ, էջ 904):

բ) **Քրիստոսի հարս(ն)** և սրա բառային տարրերակը՝ **Քրիստոսի հարսնացու**⁸.—Հարսն Քրիստոսի ընտրեալ ի բիրոց, ո՛վ սուրբ Հռիփսիմէ (Շնորհ., էջ 269): Ի՞նչ է ուզում անմեղ կույսերից: **Քրիստոսի** անարատ **հարսնացուներին** տալ պղծությա՞ն, ամուսնացնե՞լ (ԱԶ, էջ 643):

Աստվածաշնչից սկսած՝ այլաբանորեն Քրիստոսի հարս է ըմբռնվում նաև եկեղեցին:

«Քրիստոնյաների հավաքական ամբողջություն», «քրիստոնեական համայնք» նշանակությունն է արտահայտում **Քրիստոսի հօտ**** դարձվածքը⁹ (հմմտ. **Աստուծոյ հօտ** և **հօտ քրիստոսեան**).—Հրաման տայր նոցա ... վերակացու լինել լուսաւորապէս **հօտին Քրիստոսի** (Ագաթ., էջ 437): Զոր ձգէր խորամանկութեամբ յանարատ **հօտն Քրիստոսի** (Փարպ., էջ 44): Քանակային տարրերակն է **Քրիստոսի բանաւոր հօտ**, որն էլ իր հերթին հեկն

⁸ Հմմտ. **Փեսայն Քրիստոս** ուրախ լիցի առ հարսինն (Ագաթ., էջ 347):

⁹ «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» նշում է «քրիստոնյա ժողովուրդ» իմաստը (էջ 604), որ մեր կարծիքով ճշգրիտ չէ:

5-րդ դարում ունեցել է իր բառային տարբերակը՝ **բանաւոր խաշն Քրիստոսի**: Օրինակներ՝ ... հեղուկ և քահանայից ընտրելոց Աստուծոյ և ճշմարտապէս հովուաց զարիւն ի պարանոցաց իւրեանց ի վերայ ընտրեալ **բանաւոր հօտին Քրիստոսի** (Փարպ., էջ 2): ... թէ ում արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն և հովուել **բանաւոր խաշանց Քրիստոսի** (Բուգ., էջ 108):

Հաւաքականության իմաստ է արտահայտում նաև **Քրիստոսի (խաշակիր) գունդ** դարձվածային միավորը.—**Ի խաշակիր գունդն Քրիստոսի** խառնէր (Կոր., էջ 38): Խառնեցին ի **գունդն Քրիստոսի** (Լեւաթ., էջ 320):

Եւստին բառակապակցություններ կան, որոնք նշանակում են «քրիստոնեություն. քրիստոնեական կրոն հավատ»:

ա) **Քրիստոսի հաւատ**.—Սպասաւորէր ըստ աշակերտաց **հաւատոցն Քրիստոսի** (Կոր., էջ 40): Փափագէին ... տալ զանձինս ի մահ ի վերայ սուրբ և ճշմարիտ **հաւատոյն Քրիստոսի** (Փարպ., էջ 64): Տարբերակն է **հաւատ քրիստոսական** կապակցությունը:

բ) **կրօն քրիստոսական**, որ ունի **Քրիստոսի կրոն** ուշ վկայված տարբերակը. ընդդիմանա կամաց թագաւորին յաղագս **կրօնից քրիստոսականաց** (Խոր., էջ 246):

Վերոհիշյալ զույգ կապակցությունները պարզորոշ ցույց են տալիս, որ **Քրիստոս** անվան սեռականի ձևը և **քրիստոսական** «քրիստոնեական», «Քրիստոսին հատուկ» ածականը համարժեք, այսինքն՝ փոխարկելի են: Այս պարագայում Փրկչի անունը հանդես է գալիս իբրև խորհրդանշան (սիմվոլ): Այդպես **Քրիստոսի եկեղեցի** բաղադրյալ անվանումը ընկալվում է որպես «քրիստոնեական եկեղեցի». հմմտ. Կանգնեաց անդ **զեկեղեցին Քրիստոսի** (Ագաթ., էջ 439): Խոկացին կործանել և շփոթել զսրբութիւն **եկեղեցեաց Քրիստոսի** (Ղևոնդ, էջ 152): Այս երևույթը դարձվածքներում առհասարակ եզակի չէ:

գ) **Քրիստոսական պաշտամունք** «Քրիստոսի՝ քրիստոնեական պաշտամունք՝ դավանանք».—Իսկ իբրև զգացեալ Տրդատիոս վասն Գրիգորի, թէ **քրիստոսական պաշտաման** հաղորդ է՝ սկսեալ այնուհետև սյատուհասակոծ առնէր զնա (Ագաթ., էջ 25):

Տուն Քրիստոսի կայուն բառակապակցությունը նշանակում է նախ «եկեղեցի». յորժամ բարերարք կոչեցին զնա լինել հոգաբարձու **տանն Քրիստոսի** (Բուգ., էջ 112), ապա նաև՝ «Քրիստոսի գաղափարների, հավատի հանգրվան». **տուն Քրիստոսի** սուրբ առաքեալք են (Արծր., էջ 394): Հմմտ. Շինեաց Յիսուս ըզտուն իւր սուրբ եկեղեցի (Շնորհ., էջ 88): Բառակազմական և իմաստային տեսանկյուններից **տուն Քրիստոսի** դարձվածքը կարելի է համեմատել **տուն Աստուծոյ, տուն Տեառն** և նման այլ միավորների հետ:

Քրիստոսական կնիք շրջապությունն արտահայտում է «խաշ» նշանակությունը:

Այսպիսով՝ քրիստոնեության մի շարք կարևոր հասկացություններ մատնանշվում են այնպիսի կայուն բառակապակցություններով, որոնց բաղադրիչներից է Փրկչի անունը:

Քրիստոս խաշվեց, հարություն առաւ, համբարձվաւ երկինք, և ճշմարիտ քրիստոնյայի երազանքն է երկնային թագավորությունում հանդիպել նրան, լինել նրա մոտ: «Մահանալ, երկնային թագավորություն ընկնել» իմաստն են արտահայտում մի քանի դարձվածքներ:

ա) **Գնալ // երթալ առ Քրիստոս**.—... կիսարեա ելին յաշխարհէ՝ եր-

թալով առ յոյսն իւրեանց **Քրիստոս** (ՀԶՀ, ԺԳ, էջ 106): ... տացէ սոցա Տէր Աստուած կրկին կենդանութիւն բազում ամաւք և ժամանակաւք... գեղբարս սոցա՝ զտարածամ գնացեալսն առ **Քրիստոս** (անդ, էջ 25):

բ) **Փոխուել ի Քրիստոս**.—Ընդ նմին յիշեալիք ... և զդատրիկն իւր՝ զՆորանսթի, որ յայս ամի փոխեցաւ ի **Քրիստոս** (ՀԶՀ, ԺԳ, էջ 164): Սա ունի տարբերակներ՝ ա) շարադասական՝ ի յիշատակ ... Թորոսի, որ ի **Քրիստոս** փոխեցաւ, և ամենայն ազգականաց՝ կենդանեաց եւ մեռելոց (անդ, էջ 13), բ) քերականական՝ դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր ... և դստերացն՝ Մարամին և Աննային, որ փոխեր են առ **Քրիստոս** ... (ՀԶՀ, ԺԷ, էջ 116), գ) բառական՝ յիշեալիք ի **Քրիստոս** ... և զվերայփոխեալ ի **Քրիստոս** զաւակն իմ զՍադադին և զԾնողսն իմ (ՀԶՀ, ԺԳ, էջ 922):

գ) Բարբառային մի դարձվածք՝ **Քրիստոսի մոտ (քով ուղարկել) դնրկել**^{**}, արտահայտում է «սպանել, մեռցնել» իմաստը:

Թվարկվածների հետ իմաստային աղերսներ ունեն մի շարք դարձվածային արտահայտություններ: Հմմտ. **Մեռեալք՝ որ ի Քրիստոս**՝ յառնեն անապականացուք (Եզն., էջ 295): ... իմոյ յառաջ վաճխանեալ ի **Քրիստոս**, ի գերեզմանս անցա ցաղ ողորմութեանն Աստուծոյ իջցէ (ՀԶՀ, ԺԳ, էջ 56): ... գեղբայրն իւր Վարդան քահանա՝ զհանգուցեալն ի **Քրիստոս** (անդ, էջ 190): ... ի յիշատակ անձին իմոյ, և ծնաւորաց և եղբարց իմոց ի **Քրիստոս** ննջեցելոցն (անդ, էջ 151): Ինչպես նաև՝ ի **Քրիստոս** փոխեցեալ, առ **Քրիստոս** գնացեալ:

Հնարավոր է առանձնացնել առնչակից իմաստներ արտահայտող դարձվածային միավորների ևս մի խումբ: Սրանք այն կայուն բառակապակցություններն են, որոնք կապվում են **Քրիստոսի** չարչարանքների, քրիստոնյաների՝ Աստծո Որդու օրինակին հետևելու, նրա ճակատագրին հաղորդակից լինելու հետ:

ա) **Քրիստոսի չարչարանք / տառապանք / կրել** / «անասելի ծանր, անտանելի տանջանքներ, չարչարանք (քաշել)».—**Չարչարանօքն Քրիստոսի** վայելիցեմք ի նորա կամս (Ագաթ., էջ 120): Առին ... յանձինս իւրեանց զլոյս չարչարանաց խաչին, և նովին **Քրիստոսի չարչարանօքն** օրինակեալ զհամբերութիւն Փրկչին յանձինս իւրեանց (անդ, էջ 296):

Այս նույն կառույցն անշուշտ կարող է կիրառվել նաև ուղղակի նշանակությամբ, և այս դեպքում այն հարկ է դիտարկել իբրև ազատ բառակապակցություն: Օրինակ՝ Զի չարչարանօք տեսուն **Քրիստոսի** միածնի Որդւոյն աստուծոյ, ամենայն ի նոյն ժողովեցաւ որ յերկինս և որ յերկրի (Բուգ., էջ 132):

բ) **Բառնալ զխաչն Քրիստոսի** (աշխարհաբար՝ **Քրիստոսի խաչը կրել**) **տանել**.—Որ ոչ ուրանայ զանձն իւր, ոչ կարէ բառնալ զխաչն **Քրիստոսի** (Եզն., էջ 310): Եւ ապա կարես բառնալ զխաչն **Քրիստոսի** (անդ, էջ 306): Աշխարհաբար տարբերակում առաջին բաղադրիչը կամընտիր անդամ է. նրա փոխարեն հաճախ գործածվում է անձնակաճ դերանունը՝ **իմ/քո/մեր/ձեր խաչը կրել**:

գ) **Քրիստոսին խաչակից լինել** «Քրիստոսի ճակատագրին արժանանալ. նրա պես խաչվել».—Իսկ, նոքա առաւել քան զառաջինն՝ ընդդէմ չարչարանացն **խաչակից լինել Քրիստոսի**. ուրացան զանձինս և առին զխաչն **Քրիստոսի** և գնացին զհետ կոչողին (Արծր., էջ 292):

Նշենք, որ կայուն բառակապակցության (բաղադրյալ անվանման) արժեք ունի **Քրիստոսի խաչ** ոչ փոխաբերական նշանակությամբ միավորը.— Ողբալով ասեմ զթշնամեաց խաչին **Քրիստոսի** (Ագաթ., էջ 241): Եւ փոխա-

նակ սնուտի պաշտամանցն, զոր տապալեցին յամենայն տեղիս հեթանոսացն, զփրկական խաչն **Քրիստոսի** կանգնեին (Եղ., էջ 69):

Բաղադրիչների որոշակի նույնականություն ունեն, բայց բոլորովին տարբեր են՝ ա) սուտ **Քրիստոս** «նեո, դերաքրիստոս». առեալ ի պատմել զպայման մեծամեծ նեղութեանցն և սուտ քրիստոսացն և սուտ մարգարէիցն (Ագաթ., էջ 233), բ) սուտ **Քրիստոս ձևանալ*** «բարեպաշտ ձևանալ»: Վելջինս առաջացել է ոչ թե սուտ **Քրիստոս**-ից, այլ **Քրիստոս ձևանալ** կապակցությանն ավելացել է սուտ ածականը՝ «կեղծ» իմաստով:

Մի դարձվածք ստեղծվել է ռուսերենի համապատասխան կառույցի նվաճականությամբ. как у Христа за пазухой—**ոնց որ Քրիստոսի գոգում**՝ «բոլորովին ապահով» նշանակությամբ, (ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, Երևան, 1975, էջ 561), որ կարելի է համեմատել **Աբրահամի գոգում լինել** դարձվածքի հետ:

Քրիստոս անունը պարունակող մի շարք կայուն բառակապակցություններ տարբեր բնույթի, երանգի արտահայտություններ են:

Աստվածորդու **Հիսուս Քրիստոս** անունը, բացականչության ձևով, տարբեր իրադրություններում համապատասխան հնչերանգով արտահայտում է վախ կամ զարմանք: Մերթ աավում է իբր բարկությունը զսպելու համար, մերթ երեխային լողացնելիս կամ քնեցնելիս՝ չար ուժերին վանելու համար: Տարբերակը՝ **Հիսուս քեզ Քրիստոս******: Համանման երանգներով գործածական է եղել նաև **Քրիստոս Աստված****** կայուն բառակապակցությունը:

Քրիստոսին ապավինելու իրողությունը տեսնում ենք նաև **Քրիստոս մեր մեջ*** (արևմտ. **մեջերնիս**) արտահայտության պարագայում: Ժողովուրդը Հիսուսին կանչում է օգնության ջղագարության հիվանդության ժամանակ՝ ի չիք դարձնելու դիվական ազդեցությունը:

Մի բացականչություն էլ գրանցել ենք սասունցիների խոսքից՝ **յա՛ Աստված, յա՛ Քրիստոս...**, մնացած մասը կայուն չէ. կարող է, օրինակ, նշանակել՝ «մեր գործը թող հաջողի», «բարին կատարվի» և այլն (ինչպես որ ասում են «Աստված ձայնդ լսի», «Աստված կատարի»):

Բարեմաղթության արժեքով կիրառվող միավորներ կան, որոնք իրենց կառուցվածքով ամբողջական նախադասություններ են: Օրինակներ՝ **Ողջ լերուք ի Քրիստոս** (Ագաթ., էջ 431): **Մխիթարեցարուք ի Քրիստոս** (Բուզ., էջ 44):

Թախանձանքի, հորդորի արտահայտություն՝ **Յիշեսջիք ի Քրիստոս...** և զամենայն եղբարս մեր(ՀԶՀ, ԺԳ, էջ 21): Կրկին անգամ **յիշեցէք ի Քրիստոս** և զիս (ՀԶՀ, ԺԷ, էջ 119):

Երդման արտահայտություններ են՝ **Քրիստոս գիտենա**** և **Քրիստոսը վկա**** (= **Աստված վկա**), որոնք աավում են ի հաստատումն խոսքի ճշմարտացիության:

Աջակցություն, օգնություն հայցելու, ինքնահուսադրման արտահայտություն (խոսք) է **Քրիստոս մեզ պահապան** (= **Աստված մեզ պահապան**): Անձնական դերանվան երկրորդ դեմքի գործածության դեպքում արտահայտությունը ձեռք է բերում մաղթանքի արժեք՝ **Քրիստոս քեզ պահապան**: Այդպես ունենք **Քրիստոս մեզ օգնական (լինի)** և **Քրիստոս քեզ օգնական** (= **Աստված մեզ (քեզ օգնական)**): Սրանց հոմանիշը՝ **Աստված մեզ հետ**:

Թախանձանքի արտահայտության արժեք ունի **Քրիստոսի սիրուն**** (= **Աստծու սիրուն**), որն ունի իր կառուցվածքային տարբերակը՝ **ի սեր Քրիստոսի*****, բառային տարբերակը՝ **Քրիստոսի խաթեր*****, որ բարբառում

յին է: Սրանք, ինչպես նաև շարահյուսական մի այլ հոմանիշ՝ **վասն սիրոյն Քրիստոսի**, նախապես եղել են ոչ փոխաբերական նշանակությամբ դարձվածային արտահայտություններ:

Կարելի է ենթադրել, որ թախանձական արտահայտության նշանակությամբ էլ երբևիցե (այն ժամանակ, երբ գրաբարը խոսակցական լեզու էր) գործածական է եղել **վասն սիրոյն Քրիստոսի** կապակցությունը:

Հայ մատենագրության մեջ հանդիպում են **Քրիստոս** անունով բազմաթիվ ուրիշ դարձվածային արտահայտություններ, բաղադրյալ անվանումներ (ոչ փոխաբերական նշանակությամբ)՝ **զՔրիստոս զգեալ** (>քրիստոսազգեաց), **ի Քրիստոս մկրտել**, **զօրացեալք ի Քրիստոս**, **վասն անուանն Քրիստոսի**, **Քրիստոս պատարագեալ**, **յանուն Քրիստոսի** (**Քրիստոսի անունով**), **Քրիստոսի անտարան**, **Քրիստոսի առաքեալ**, **Քրիստոսից առաջ** (համառոտագրությամբ՝ **Ք. ա.**) և այլն:

Հայերենում կան Աստվածաշնչից ծագումն առած բազմաթիվ այլ կայուն բառակապակցություններ ևս, որոնց բաղադրիչներից մեկը հատուկ անուն է, ինչպես՝ **Նոյի ագռավ**, **Ադամի (Եվայի) զգեստով**, **Հուդայի համբույր**, **աղբատ Ղազարոս**, **Աբրահամի գառ** և այլն, սակայն դրանցից և ոչ մեկով մեր ներկայացրածի պես ընդգրկում ունեցող դարձվածանի հնարավոր չէ առանձնացնել: Անշուշտ չենք կարծում, թե ներկայացրինք **Քրիստոս** անունով հայերեն բոլոր կայուն բառակապակցությունները, սակայն այսքանը երևի կարող է գրաբարի դարձվածաբանական բառարանի նյութ դառնալ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

Ագաթ.—Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1909:

Արծր.—Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985:

Բուզ.—Փաւստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987:

Եզն.—Եզնկայ Կողբացոյ Բագրեանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վեներիկ, 1826:

Եղ.—Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Խոր.—Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913:

Կոր.—Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

ՀԶՀ, ԺԳ.—Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984:

ՀԶՀ, ԺԷ.—Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641—1660 թթ.), հ. Գ, կազմեց Վազգեն Հակոբյան, Երևան, 1984:

Ղևոնդ.—Ղևոնդայ Վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:

Շնորհ.—Ներսէս Շնորհալի, Տաղեր և գանձեր, Երևան, 1987:

ՍԶ.—Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. 7 («Պապ թագավոր»), Երևան, 1962:

Ր.—Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 7 («Սամվել»), Երևան, 1963:

Ուոհ.—Մատթէոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, Երևան, 1991:

Փարպ.—Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1904: